ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 հուլիսի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

95
(2761)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԲԴԽ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿԻՐԱԿԻ ՕՐԸ ՀԱՎԱՔՎԵԼՈՒ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների հանաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամները կիրակի օրը հավաքվելու են՝ որոշելու 5 դատավորների ճակատագիրը: Բանն այն է, որ երկուշաբթի օրը ԲԴԽ-ն հրապարակելու է 5 դատավորների վերաբերյալ որոշում: Հիշեցնենք, որ ԲԴԽ-ն կարգապահական վարույթ է հարուցել դատավորներ Տիգրան Պետրոսյանի, Արտակ Բարսեղյանի, Աստղիկ Խառատյանի, Սամվել Թադեւոսյանի եւ Դավիթ Հարությունյանի նկատմամբ: Դատելով իրավիճակից ու այս կարգապահականների քննությունների շուրջ բարձացված աղմուկից՝ ԲԴԽ-ն, ըստ ամենայնի, 4 դատավորների՝ Աստղիկ Խառատյանի, Տիգրան Պետրոսյանի, Սամվել Թադեւոսյանի, Արտակ Բարսեղյանի լիազորությունները կդադարեցնի, իսկ Դավիթ Հարությունյանի մասով այս պահի դրությամբ դեռ վերջնական որոշում չկա: Երկմտանքները նրա մասով շատ են: «Ժողովուրդ» օրաթերթը հեռավար կհետեւի, թե ինչ է կատարվում ԲԴԽ դռնփակ նիստի շրջանակներում, եւ կներկայացնի մանրամասներ:

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը 2022 թվականին 25 մլն դրամով Երեւանի Արաբկիր վարչական շրջանում բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածք է վաճառել: Վաճառքն իրականացվել է մարտի 1-ին, իսկ գնորդն էլ Մ. Սարգսյանն է: 2022 թվականի տարեվերջին նա ունեցել է պահպանված երկու անշարժ գույք, որոնցից մեկը 2005 թվականին գնված ամառանոցն է, որը գտնվում է Արագածոտնի մարզի Ղազարավանում: Մյուս անշարժ գույքն էլ բնակարան է Արաբկիր վարչական շրջանում, որը գնվել է 2014 թվականին, համատեղ սեփականությամբ: Նախարարն ունի նաեւ 2012 թվականի արտադրության Ford մակնիշի ավտոմեքենա, որը նա ձեռք է բերել 2015 թվականին: Տարեվերջին բանկային հաշիվներին Ավանեսյանն ունեցել է 2 մլն դրամ եւ 73 եվրո գումար, իսկ, ահա, նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 1 մլն 500 հազար դրամ: Մեկ տարվա ընթացքում առողջապահության նախարարի եկամուտը կազմել է 32 մլն 187 հազար դրամ, որից նախարարի աշխատավարձը կազմել է 20 մլն դրամ, իսկ 11 մլն 998 հազար դրամ էլ նա ստացել է «Աբովյան 39» ՍՊԸ-ից որպես շահաբաժին: Ծախսերի մասին ոչ մի տվյալ նրա հայտարարագրում առկա չէ: Նրա ամուսինը՝ Ստեփան Ավանեսյանը, ունի երեք հողամաս, երեքն էլ՝ Արաբկիրում եւ գնված 2007 թվականին: Նա բանկային հաշիվներին տարվա վերջում գումար չի ունեցել, իսկ կանխիկ գումարն էլ կազմել է 1 մլն 250 հազար դրամ եւ 4550 դոլար: Միայն 2021 թվականի տվյալներով՝ Անահիտ Ավանեսյանի ամուսնուն պատկանող «Արմֆարմացիա» ընկերությունը կնքել է 240 պայմանագիր՝ 44 պետական կառույցի հետ՝ ընդհանուր մոտ 606,7 մլն դրամ արժողությամբ, որի կեսից ավելին՝ 137 պայմանագիրը՝ արդեն Ավանեսյանի՝ փոխնախարար եղած ժամանակ: 209,5 մլն ՀՀ դրամի պայմանագրեր ունի տարբեր պետական կառույցների, այդ թվում՝ Առողջապահության նախարարության եւ նրա ենթակայության տակ գտնվող կառույցների հետ:



Տիգրան Խզմալյանի «Հայաստանի եվրոպական կուսակցությունը» փոխել է քաղաքապետի իր թեկնածուին: 2022թ.-ին Խզմալյանը մեծ ոգեւորությամբ հայտարարեց, որ Երեւանի քաղաքապետի ընտրություններում Հայաստանի Եվրոպական կուսակցության թեկնածուն է երգիչ, երգահան Ռուբեն Հախվերդյանը: Խզմալյանն այդ ժամանակ բնորոշել էր Հախվերդյանին որպես «ազնիվ, անկեղծ, արդար: Սովորական հանճար: Իսկական երեւանցի: Իսկական քաղաքացի: Իսկական եվրոպացի: Ազգի սերուցք»: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Եվրոպական կուսակցությունը փոխել է քաղաքապետի իր թեկնածուին. այժմ նրանց թեկնածուն սոցիոլոգ Կարեն Սարգսյանն է: «Ժողովուրդ» օրաթերթը Եվրոպական կուսակցության նախագահ Տիգրան Խզմալյանից հետաքրքրվեց՝ որն է սրա պատճառը, խնդիրներ են եղել Հախվերդյանի հետ, թե ինքն է հրաժարվել առաջադրվելուց: «Ռուբեն Հախվերդյանի թեկնածությունը մեր պատասխանն էր որոշ անհեթեթ թեկնածուներին: Դրանով մենք ուզում էինք հիշեցնել Երեւանի բացառիկ արժեքը եւ կարեւորությունը մեր երկրի, մշակույթի եւ արժանապատվության համար: Հետագայում մենք փորձեցինք ժողովրդավարական ուժերի դաշինք ստեղծել գաղափարապես նույն դաշտում գտնվող կուսակցությունների հետ: Քննարկումներից եւ բանակցություններից հետո ՀԵՎԿ-ի առաջարկն ընդունեց Հայաստանի հնագույն ժողովրդավարական կառույցը՝ «Սոցիալ-դեմոկրատ հնչակյան»-ը: Մեր երկու կուսակցությունների միասնական թեկնածու ընտրվեց Կարեն Սարգսյանը: Ռուբենը մնում է մեր լավագույն ընկերը եւ համախոհը»,-ասաց նա:



31 ուսումնասիրություն եւ 201 մշտադիտարկում կատարած ՀՀ պետական վերահսկողական ծառայության՝ 2022 թվականի պետական բյուջեով իրականացվող երեք միջոցառումների ծախսերը կազմել են 774 մլն դրամ: Իսկ որքանո՞վ է արդարացված այս կառույցի գոյությունն ընդհանրապես: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության վարչապետին սահմանադրությամբ եւ օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացման ապահովում» միջոցառման գծով պետական բյուջեից տրվել է 752 մլն դրամ: «Պետական վերահսկողական ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման գծով ծառայությանը հատկացվել է 16 մլն դրամ, ծախսը կազմել է 15,7 մլն դրամ, ապահովվել է 97,8 տոկոս կատարողական, ընդ որում՝ 2022 թվականին ՊՎԾ-ն հիմնականում ուսումնասիրություններ ու մշտադիտարկումներ է իրականացրել: Իսկ թե դրանք ինչ արդյունք են տվել, որքանով են բարձրացրել պետական կառավարման արդյունավետությունը, դժվար է ասել:

ԶՐՈՒՅՑ

«ԱՐՏ ԼԱՆՉ»-Ի ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ՝ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Արտ Լանչ» ընկերության համասեփականատեր Բակուր Մելքոնյանի հետ՝ կապված ՊՆ-ին մատակարարվող սննդի հետ, որը, ըստ մեր ունեցած տեղեկությունների, թունավորման դեպքերի է հասցրել: Մենք փորձել ենք պարզել, թե ինչպես է ստացվում, որ ընկերությունն անորակ սնունդ է մատակարարում բանակին, որի հետեւանքով նման տհաճ իրավիճակ է ստեղծվում:

-Պարոն Մելքոնյան, մենք դժգոհություններ ենք ստանում հատկապես Պաշտպանության նախարարությունից: Նշվում է, որ եղել են դեպքեր, երբ զինվորները թունավորվել են, առաջացել է փորլուծություն: Մենք նաեւ ունենք «Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում մատուցված սննդի հետեւանքով թունավորման դեպք: Ի՞նչ կասեք այս մասին: Ինչո՞ւ մարդիկ, որ Ձեզ գումար են վճարում, կանգնում են նման խնդրի առջեւ:

-Ես բազմաթիվ անգամներ այս հարցի մասին խոսել եմ տարբեր տեղերում: Մեր հիմնական խնդիրն այն է, որ առանց հետաքննության ու փաստերի բարձրաձայնում ենք խնդիրներ:

Ես միշտ մի լավ օրինակ եմ բերում. երբ ես գտնվում էի Կանադայում ընկերջս հետ, ով էլի շատ լավ բիզնեսմեն է, իրար հետ հայաստանյան լուրերն էինք կարդում եւ տեսանք, որ X կազմակերպության աշխատակիցը մարդու է ենթարկել վրաերթի: Սա երբ ես պատմում եմ, Հայաստանում որեւէ ռեակցիա չի առաջ բերում մարդկանց մոտ: Իմ համար էլ էր դա սովորական: Կարդացի, ուզում էի առաջ անցնել: Ընկերս այդ պահին հարցրեց, թե ինչ է կատարվում՝ ասելով, որ տվյալ լրատվամիջոցը եթե լիներ Կանադայում, կլուծարեին, որովհետեւ եթե պարզվի, որ տվյալ վարորդին տվյալ կազմակերպությունը ընդունել է աշխատանքի առանց վարորդական իրավունքի կամ, օրինակ, աշխատանքի ժամանակ թողել են ալկոհոլ օգտագործի, արդար է, որ գրվել է այդ մասին, բայց եթե ամեն ինչ օրենքի սահմաններում է, եւ այդ աշխատակիցը վրաերթի է ենթարկել մեկ այլ մարդու, ո՞վ է պատասխանատուն:

Զինվորների պարագայում պատկերն այսպիսին է: Բանակին սնունդ տալիս է 6 կազմակերպություն: Դրանցից մեկը «Արտ Լանչ»-ն է: Ցավոք սրտի, այս պարագայում եւս, առանց որեւէ փաստերի ստուգման, առաջ բերվեց մեր կազմակերպության անունը: Ինչի՞ համար. որովհետեւ անունը շատ հայտնի է, եւ շատ հետաքրքիր կլինի կարդալը, որ դա հենց ինքն է արել կամ մեկ այլ հայտնի կազմակերպություն:

-Իսկ պարզաբանում ստացե՞լ եք, թե ինչու են հենց «Արտ Լանչ»-ի անունը նշում:

-ՊՆ-ի բոլոր փաստաթղթերում կան, թե ինչ սննդից է տեղի ունեցել թունավորումը: Ես ՊՆ-ի կողմից լիազորված չեմ հայտարարություններ անել: Կա կարգուկանոն, որից ելնելով՝ մենք այժմ գտնվում ենք ամենախիստ ստուգման տակ թե՛ սննդի տեսչության եւ թե՛ այլ գերատեսչությունների կողմից:

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԸ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Քանի Ալիեւ-Նիկոլ չարաբաստիկ զույգը կա, չեն լինելու խաղաղություն, Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների տարածքային ամբողջականություն, ինքնիշխանություն, կենսական ազգային շահ»,- հայտարարություն է տարածել «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ, Հայաստանի ԱԳ առաջին նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը:



Նա նաեւ նշել է. «Եվ դարձյալ արտահերթ ու ակամա մարտիրոսված մեր չորս ոսկե տղերքն էին Իլհամի եւ Նիկոլի պայմանավորված քաղաքականության թիրախում:

Անհուն կսկիծով կիսում եմ Արմոյի, Սամվելի, Երվանդի եւ Գագիկի ընտանիքների ու ծառայակից ընկերների անասելի վիշտը: Նրանց կենդանի հիշատակը մեզ՝ ժառանգորդներիս, թող լույս-ճշմարտություն բերի, իմաստնություն ու կամք, հատուցում եւ ողնաշարի ուղղում:

Քանի չարաբաստիկ զույգը կա, չեն լինելու խաղաղություն, Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների տարածքային ամբողջականություն, ինքնիշխանություն, կենսական ազգային շահ: Չեն լինելու սահմանադրական իրավունք ու տարրական արժանապատվություն, ՄԱԿ-ում ծածանվող պետական դրոշին վայել տեղ ու դեր՝ այս տարածագոտում եւ աշխարհում:

Լինելու են լոկ կրկնվող շարաններ զինվորական եւ քաղաքացիական տեւական սպանությունների, հայրենի հողի զիջումների ու կորուստների՝ դավադիր գործարքների կամ պարտադրված նախահարձակումների, հայ մարդու ստորացման եւ հանրության ամլացման: Լինելու են, վերջին հաշվով, Հայաստանի պետական կործանում եւ Արցախի ոչնչացում, իսկ լավագույն դիպաշարում՝ նրանց վերածում անկամ ու ենթակա, հաշմված ու խեղված, ոչ մեկին չվերաբերելի միավորների:

Իրենց Մուհամեդ եւ Քրիստոս երեւակայողները կամ առնվազն Նապոլեոն ու Մանդելա, միգուցեեւ Ռաբին ու Սադաթ, կարող են հոգեկանի աշխարհում խաղաղության հեղինակավոր մրցանակներ ըղձալ, բայց իրենց չարիքի եւ հանցագործությունների համար Իլհամի ու Նիկոլի բուն անխուսափելի տեղը խստագույնս արդարադատության ատյանի առջեւ է՝ մեկը՝ միջազգային, մյուսն՝ազգային: Մեր հայրենիքի, պետականության, ազգի ու ժողովրդի, Հայաստանի, Արցախի ու Սփյուռքի, Արարատի ու Արագածի, մեր ողջ պատմության եւ ապագայի ցանկացած հնարավորության ճակատագիրը հենց այսօր դրված է զոհասեղանին:

Բացառիկ պայմանակարգով պիտի հետաձգենք անհատական եւ հատվածական, մեծ ու փոքր, հին ու նոր շարժումների, հոսանքների կամ կուսակցությունների գերակայությունը եւ փոխարենը ազգովի, հասարակավ, քաղաքացիական հզոր ալիքով, ապա եւ պետականորեն գնանք մեծ համախմբման, մեկ անգամ եւ վերջնականապես լուծենք սերունդների ու հայկական քաղաքակրթության բազմադարյա պատմագրության թնջուկը՝Հայոց մեծ հարցը:

Մեր օրերին կամ երբեք: Մենք կամ ոչ մեկ»:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՈՒՄ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը գրում է. «Հայաստանում մասնագիտական իրավունքները պաշտպանված չեն: Քննարկում ենք վերջին ժամանակահատվածում Հայաստանում փաստաբանների նկատմամբ կիրառվող բռնության դեպքերի աճը:

Սա վկայում է, որ Հայաստանում դեռեւս մտահոգիչ է անձի ազատության, իրավաբանական օգնություն ստանալու եւ մասնագիտական գործունեությամբ զբաղվելու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրականացումը:

Տեղի ունցածը արտառոց է ոչ միայն այն իմաստով, որ հանցավոր արարքը կատարում է իրավապահ գործառույթ իրականացնող անձը, այլ նաեւ այն, որ այդպիսի վարքագիծն ուղղված է նաեւ իրավապաշտպան գործառույթ իրականացնող անձի նկատմամբ՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս՝ փաստաբանին նույնականացնելով իր վստահորդի հետ:

Այդպիսի վարքագիծը բացահայտ ոտնահարում է ՀՀ Սահմանադրությունն ու օրենքները եւ խայտառակ հետընթաց արձանագրում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման տեսանկյունից»:

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ՝ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐՈՎ

ԱԳՆ խոսնակ Անի Բաղալյանը տեղեկատվություն է հրապարակել՝ ի պատասխան ՀՀ նույնականացման քարտերով Վրաստան ճամփորդելու հնարավորության ժամկետի մասին հարցումների: «ՀՀ նույնականացման քարտերով (տվյալների էլեկտրոնային կրիչ պարունակող) Վրաստան ճամփորդել հնարավոր կլինի 2023թ. հունվարի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջեւ երկու պետությունների քաղաքացիների համար փոխադարձ առանց մուտքի արտոնագրի ճամփորդելու մասին» համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո: 2023թ. հունիսի 26-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է համաձայնագիրը վավերացնելու մասին օրենքը: Որպես հաջորդ քայլ՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ է կողմերի միջեւ համապատասխան ամսաթվի հաստատում: Համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու վերաբերյալ տեղեկատվությունը կհրապարակվի ԱԳՆ կողմից՝ տեղադրվելով պաշտոնական հարթակներում»,- նշված է հաղորդագրությունում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱԽ ՆԻՍՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Անվտանգության խորհրդի հերթական նիստը: Բացի Ախ անդամներից, նիստին մասնակցել են նաեւ Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը եւ Պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանը: Վարչապետի աշխատակազմից հայտնում են, որ քննարկվել են օրակարգային տարբեր հարցեր:

«ԷՄԱԼԵ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ»

Խորհրդարանում հունիսի 13-ին բացվել էր «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Քրիստինե Պողոսյանի «Էմալե հավերժություն» խորագրով ցուցահանդեսը: ԱԺ դահլիճ մտնող հատվածում ցուցադրված են պատգամավորի ձեռքով նկարած էմալե գեղեցիկ նկարներ: Ի դեպ, վարչապետ Նիկոլ Փաշինյանն էլ անձամբ շրջայց էր կատարել ԱԺ-ում՝ ուսումնասիրելով պատգամավորի նկարները: ԱԺ-ում հաճախ են նման ցուցահանդեսներ կազմակեպվում: Ուշագրավ է, որ այդ բոլոր դեպքերում ընդամենը 2-3 օր է տեւում ցուցահանդեսը, այնինչ ՔՊ-ական պատգամավորի ձեռքի աշխատանքներն արդեն երեք շաբաթ է՝ցուցադրված են ԱԺ-ում: Հիշեցնենք՝ Քրիստինե Պողոսյանի՝ «Էմալե հավերժություն» խորագիրը կրող ցուցահանդեսը նախորդ տարի տեղի էր ունեցել Նկարիչների միությունում:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՊՐԻԳՈԺԻՆԻ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՆԱԽՈՐԺՈՒԹՅՈՒՆ

«Ռուսաստանը պարտավոր չէ որեւիցե մեկին որեւէ բան բացատրել խռովության փորձի եւ երկրում գործընթացների վրա դրա հնարավոր ազդեցության վերաբերյալ»,- լրագրողներին ասել է ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը. հաղորդում է «ՌԻԱ Նովոստին»:

«Գիտեք, մենք պարտավոր չենք որեւիցե մեկին որեւէ բան բացատրել, ինչ-որ հավաստիացումներ տալ, մենք գործում ենք թափանցիկ, նախագահը խոսել է այս թեմայով, մեր երկրի բոլոր քաղաքական ուժերը խոսել են այս թեմայով: Եթե Արեւմուտքում որեւէ մեկն ինչ-որ կասկածներ ունի, դրանք ձեր խնդիրներն են»,- ասուլիսում ասել է նախարարը՝ պատասխանելով արեւմտյան լրագրողի հարցին՝ կայուն է արդյոք Ռուսաստանում իրավիճակը՝ վերջերս կատարված խռովության փորձի ֆոնին:

«Ռուսաստանը միշտ ցանկացած անախորժությունից (իսկ սա այլ կերպ, քան անախորժություն, դժվար է անվանել) դուրս է եկել ավելի դիմացկուն, ավելի ուժեղ »,- հավելել է Լավրովը:

Հիշեցնենք, որ ռուս ձեռնարկատեր, «Կոնկորդ» ընկերությունների խմբի սեփականատեր, նախկին բանտարկյալ, «կրեմլյան խոհարար», նախագահի մտերիմ, մեդիա կայսրության հիմնադիր եւ Ռուսաստանի ամենահայտնի դեմքերից «Վագներ» ՊՄԿ-ի հիմնադիր, իսկ այժմ զինված ապստամբություն կազմակերպելու համար քրեական գործով մեղադրյալ Եվգենիյ Պրիգոժինը հունիսի 23-ին հանդես էր եկել տարբեր հայտարարություններով՝ մեղադրելով ՊՆ նախարարին նախագահին խաբելու մեջ, ասելով, որ քննչական կոմիտեում հաղորդում է ներկայացրել նրա եւ գլխավոր շտաբի պետի դեմ:

Արդեն երեկոյան ՄՌԿ «Վագներ»-ի ղեկավարը հայտարարեց, որ կառույցի ճամբարներին հրթիռային հարվածներ են հասցվել, եւ իրենք ունեն շատ զոհեր: Նա հարձակման մեջ մեղադրեց ՌԴ ՊՆ-ին եւ ասաց, որ իրենք 25,000 զինվորներով գալիս են «վերականգնելու արդարությունը»: ՌԴ ՊՆ-ն հերքեց հարձակման մեղադրանքները, իսկ Անվտանգության դաշնային ծառայությունը քրեական գործ հարուցեց զինված խռովության կոչ անելու փաստի առթիվ:

Ավելի ուշ Պրիգոժինը հայտարարեց, որ ընդունում է Բելառուսի նախագահի առաջարկը Ռուսաստանի տարածքում «Վագների» շարժը դադարեցնելու եւ դեէսկալացիայի հետագա քայլերի վերաբերյալ:

Դրանից հետո ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտնեց, որ «Վագների» ղեկավարը կմեկնի Բելառուս, իսկ քրեական գործը կկարճվի:

Ավելի ուշ Պրիգոժինը հայտարարեց, որ ընդունում է Բելառուսի նախագահի առաջարկը Ռուսաստանի տարածքում «Վագների» շարժը դադարեցնելու եւ դեէսկալացիայի հետագա քայլերի վերաբերյալ:

Դրանից հետո ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտնեց, որ «Վագների» ղեկավարը կմեկնի Բելառուս, իսկ քրեական գործը կկարճվի:

Չնայած այս պայմանավորվածությանը՝ «Կոմերսանտը», վկայակոչելով իր աղբյուրներին, հայտնեց, որ հետաքննությունը դեռ շարունակվում է, Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության քննչական վարչությունը զբաղվում է զինված ապստամբություն կազմակերպելու վերաբերյալ քրեական գործով:

Ռուսաստանում «Վագների» զինված ապստամբության փորձից հետո առաջին անգամ Ռուսաստանի պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն հայտնվեց տեսախցիկների առջեւ: Նա աշխատանքային այց կատարեց ռազմական գործողությունների գոտում կռվող Արեւմտյան զորքերի խմբավորման կառավարման կետերից մեկը՝ ստուգելով ռուսական ուժերի պատրաստվածության մակարդակը:

Շոյգուն հանձնարարել էր շարունակել հետախուզական գործողությունները՝ բացահայտելու հակառակորդի ծրագրերը, ինչպես նաեւ աջակցել պատերազմում ներգրավված զորքերին եւ պայմաններ ստեղծել նրանց անվտանգ տեղակայման համար:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում տեղադրված նախագծով առաջարկվում է կանոնակարգել ձմերուկի եւ սեխի վաճառքը:

««Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ կարգելվի ձմերուկը եւ սեխը վաճառել կտրած կամ մասերի բաժանված: Նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

Ըստ նախագծի հիմնավորման՝ նման որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս ձմերուկի եւ սեխի հասունությունը ցուցադրելու նպատակով լայն տարածում է գտել վերջինիս մասերով կամ կտրված վաճառքը, ինչի արդյունքում կտրված մասում միջուկի հաստության մեջ կարող է ներթափանցել միկրոօրգանիզմներ, այդ թվում՝ պայմանական ախտածիններ, որոնք ընդունակ են առաջացնել տարբեր վարակիչ հիվանդություններ եւ պատճառ հանդիսանալ սննդային թունավորումների:

ԿԱՆԱԴԱՑԻՆԵՐԸ՝ ՄԻՋԱՆՑՔԸ ԲԱՑԵԼՈՒ ԿՈՉՈՎ

Կանադա-Արցախ պատգամավորական բարեկամության խմբի համանախագահներ, կանադացի սենատորներ Ռեյչել Թոմասը եւ Լեո Հուսակոսը հայտարարություն են հրապարակել՝ կապված Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շրջափակման 200-րդ օրվա հետ:

«Դեկտեմբերի 12-ից ադրբեջանական ուժերը շրջափակել են Լաչինի միջանցքը՝ Ղարաբաղը Հայաստանի հետ կապող միակ ճանապարհը: Շրջափակումն առաջացրել է լուրջ մարդասիրական հետեւանքներ: 2020-ից հետո Ադրբեջանի շարունակվող ագրեսիայի պատճառով Լեռնային Ղարաբաղի 120 հազար բնակիչ հայտնվել է ճգնաժամի մեջ: Մննդի սուր պակասը, վառելիքի, էլեկտրաէներգիայի, ջրի մատակարարումների խափանումները արտաքին աշխարհի հետ կապի խզման հետ ավելի են խորացրել ճգնաժամը:

Շարունակվող շրջափակումը խոչընդոտում է բանակցությունների անցկացումը: Մենք կոչ ենք անում խաղաղ ճանապարհով վերջ տալ Լեռնային Ղարաբաղի շրջափակմանն ու անմիջապես բացել Լաչինի միջանցքը»,-ասված է հայտարարության մեջ:

ՀՈՒՇԱԳԻՐ՝ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ընդունել է Հայաստան ժամանած Իտալիայի Հանրապետության գերագույն վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազ Լուիջի Սալվատոյի գլխավորած պատվիրակությանը: ՀՀ գլխավոր դատախազն ընդգծել է, որ Հայաստանը մշտապես կարեւորել է Իտալիայի հետ համագործակցության եւ հարաբերությունների խորացումը՝ հիմնված երկու ժողովուրդների միջեւ երկարատեւ բարեկամության վրա: Աննա Վարդապետյանը շնորհակալություն է հայտնել իտալացի գործընկերոջը հրավերն ընդունելու եւ փոխըմբռնման հուշագիր ստորագրելու պատրաստակամության համար:

ԹՄՐԱՆՅՈՒԹ

ԿՈԿԱՅԻՆ՝ ԲՐԱԶԻԼԻԱՅԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ

Օրերս ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության «Զվարթնոց» բաժնի աշխատակիցները ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելիս Արևմտյան մաքսատուն-վարչության ուղևորների մաքսային հսկողության բաժնի աշխատակիցների հետ համատեղ բացահայտել են թմրամիջոցների մաքսանենգության հերթական խոշոր դեպքը:



Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տարածած հաղորդագրությունից, օպերատիվ տեղեկություն է ստացվել այն մասին, որ, հնարավոր է, Սան-Պաուլո-Փարիզ-Երևան ավիաչվերթով Բրազիլիայի Դաշնային Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն ժամանող ուղևորներից մեկը Կոկաին տեսակի թմրամիջոց է տեղափոխում:

««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության «Զվարթնոց» օդանավակայանի ուղևորային համալիրի մաքսային հսկողության գոտում անձնական մաքսային զննման է ենթարկվել Հայաստան ժամանած Բրազիլիայի քաղաքացի Լ.Պ.-ն:

Ունենալով կասկածներ, որ քաղաքացին հնարավոր է մարմնում թաքցնում է թմրամիջոցներ, վերջինս ենթարկվել է տեսազննության: Նրա մարմնում նկատվել են օտար մարմիններ, որոնք դուրս բերելու նպատակով ՀՀ ՊԵԿ Արևմտյան մաքսատուն-վարչության եւ ՄԴՊ վարչության աշխատակիցների կողմից Բրազիլիայի քաղաքացին օդանավակայանից տեղափոխվել է բժշկական կենտրոն:

Բժշկական կենտրոնում իրականացված համակարգչային շերտագրման՝ սկանավորման արդյունքում պարզվել է, որ նրա հաստ աղիքի հատվածում առկա են գնդաձեւ օտար մարմիններ, որոնք վերջինիս մարմնից դուրս են բերվել բժշկական տարբեր միջամտությունների արդյունքում: Հայտնաբերվել է Կոկաին տեսակի թմրամիջոցին նմանվող 120 հատ օվալաձեւ պարկուճ, այդ զանգվածների ընդհանուր քաշը կազմել է 1216 գրամ: Հայտնաբերված թմրամիջոցի շուկայական արժեքը գերազանցել է 300 հազար ԱՄՆ դոլարը:

Փաստի առթիվ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների կողմից կազմվել է մաքսանենգության դեպքի վերաբերյալ արձանագրություն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ հոդվածի հատկանիշներով, եւ հայտնաբերված թմրամիջոցի զանգվածների հետ միասին տրամադրվել է Քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ: Բրազիլիայի քաղաքացին ձերբակալվել է, այնուհետեւ՝ կալանավորվել:

Մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցների կողմից շարունակվում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումը գործի հետ առնչություն ունեցող հնարավոր այլ անձանց շրջանակը պարզելու նպատակով:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՎԱՐՈՒՅԹ

ԽՆԴԻՐՆԵՐ՝ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպանի՝ «Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն»-ում արձանագրած խնդիրների հիման վրա՝ ՀՀ առողջապահության եւ աշխատանքի տեսչական մարմնի կողմից հարուցվել է վարչական վարույթ:

ՄԻՊ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ խոսքը վերաբերում է մասնավորապես Պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանման աշխատակիցների եւ փորձագետների կողմից ապրիլի 20-ին չհայտարարված այցի ընթացքում արձանագրված խնդիրներին՝ անձանց պահման պայմաններին, նրանց իրավունքների ապահովման վիճակին, բժշկական օգնության եւ սպասարկման հարցերին եւ այլն:

Տեսչական մարմնի բժշկական օգնության եւ սպասարկման վերահսկողության, դեղերի շրջանառության վերահսկողության, հիգիենիկ եւ սանիտարահիգիենիկ վերահսկողության բաժինների մասնագիտական խմբի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանի արձանագրած խնդիրները վերահաստատվել են, եւ դրանք վերացնելու համար տրվել են համապատասխան կարգադրություններ:

Պաշտպանի կողմից «Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն»-ում վեր հանված խնդիրների կարգավորման, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կենսապայմանների, նրանց իրավունքների ու ազատությունների վիճակի բարելավման նպատակով Առողջապահության նախարարությունը համապատասխան առաջարկներ է ուղարկել Արարատի մարզպետարան:

Հիշեցնենք, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանման աշխատակիցների եւ փորձագետների կողմից «Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ չհայտարարված այցի արդյունքները ամփոփվել են, լուծման առաջարկների հետ մեկտեղ ներկայացվել Առողջապահության նախարարություն եւ ոլորտի իրավասու այլ մարմիններ:

Մարդու իրավունքների պաշտպանը կարեւորում է այս ոլորտում պատկան գերատեսչությունների հետ ձեւավորված արդյունավետ համագործակցությունը, որի արդյունքում Պաշտպանի կողմից վեր հանված մի շարք խնդիրներ արագ արձագանքման արդյունքում ստանում են համապատասխան լուծում:

Մարդու իրավունքների պաշտպանը հետեւողական է լինելու արձանագրված խնդիրների լուծման հարցում:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԱՌԵՐԵՍ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Փաստաբան Հրանտ Անանյանը, «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում անդրադառնալով փաստաբանների՝ Էրեբունու բաժնի միջադեպին, հայտնեց. «Հերթական զավեշտը փաստաբանների նկատմամբ՝ ոստիկանության Էրեբունու բաժնում կիրառված բռնության գործով:

Ստացվում է այնպես, որ այսօր կատարված առերես հարցաքննության ընթացքում հանցագործության մասին զեկուցագիր ներկայացրած ոստիկանը հրաժարվել է ցուցմունքներ տալ զեկուցագրով նկարագրված այլ անձի վերաբերյալ, այսինքն՝նրան ուղղված հարցերը նրա դեմ ուղղված չեն եղել եւ ողջամտորեն նրա դեմ չէին կարող օգտագործվել:

Տուժող ճանաչված փաստաբանների ներկայացուցիչ Հրանտ Անանյանի կողմից ներկայացվել է հաղորդում հանցագործության մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 503 հոդվածով քրեական վարույթ նախաձեռնելու եւ վկայի կարգավիճակով հարցաքննվող ոստիկանի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելու, վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու մասին: Տեսնենք՝ օբյեկտիվ կգտնվի ՀՀ քննչական կոմիտեն, թե անգործություն կցուցաբերի ոստիկանի նման վարքագծին»:

ՎԻՃԱԿԸ ՎԱՏ Է ԵՂԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՊՆ նախկին փոխնախարար Ալիկ Միրզաբեկյանը Հակակոռուպցիոն դատարանում այն վիճակում է եղել, որ չեն կարողացել նրան հարց տալ: Ասել է թե՝ Դավիթ Տոնոյանի գործով վկան ներկայացել է դատարան, բայց, առողջական վիճակից ելնելով, նրան հարցեր չեն կարողացել տալ:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի եւ ՊՆ նախկին պաշտոնյաների քրեական գործով դատարան են կանչվել Սեյրան Օհանյանը եւ ՊՆ որոշ աշխատակիցներ: Սեյրան Օհանյանը ներկայացել է եւ հարցաքննվել, ՊՆ աշխատակիցների հարցաքննությունը շարունակվում է: Հավելենք, որ Ալիկ Միրզաբեկյանը 2016 թվականին, Սերժ Սարգսյանի հրամանով, ազատվել էր ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի պաշտոնից: Ըստ լուրերի՝ Միրզաբեկյանը սպառազինության եւ սննդամթերքի մատակարարման գնումները շուկայականից բարձր գներով էր իրականացրել:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 29-ից 30-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 69 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՇՐՋԱՓԱԿՎԱԾ ԱՐՑԱԽՆ ՈՒ 46-ՄԵՏՐԱՆՈՑ ԲՐԴՈՒՋԸ

Հունիսի 24-ին ավանդական դարձած «ՀայԲույս» փառատոնը Իջեւան խոշորացված համայնքի Ենոքավան գյուղի սարերում կրկին միավորել է Հայաստանի տարբեր անկյուններից ժամանած հարյուրավոր մարդկանց: Ամենամյա փառատոնի նպատակն է ներկայացնել եւ ժողովրդականացնել Հայաստանի հարուստ բուսական աշխարհը՝ որպես կարեւորագույն ռեսուրս, ինչպես տեղացիների, այնպես էլ զբոսաշրջիկների շրջանում բարձրացնել իրազեկվածությունը Հայաստանում աճող բույսերի կիրառման, օգտակարության վերաբերյալ: Փառատոնի ընթացքում կայացել են տարբեր ժամանցային ծրագրեր մեծերի եւ փոքրերի համար: Մասնակիցները ծանոթացել են բույսերի կիրառման տարբեր եղանակներին, սովորել տարբերակել բնական ու ոչ բնական բույսերը: Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆեյսբուքյան էջը հայտնում է, որ փառատոնի հյուրերը մասնակցել են ամենախոշոր խաղաղ բրդուճի պատրաստմանը՝ լավաշից, հայկական խոտաբույսերից եւ տարբեր երկրներում արտադրված պանիրներից: Բրդուջն ունեցել է 46 մետր երկարություն: Ենոքավանը Նիկոլ Փաշինյանի հոր՝ Վովա Փաշինյանի ծննդավայրն է, Նիկոլ Փաշինյանը ազատ ժամանակ սիրում է ընտանիքով կամ ընկերների հետ հանգստանալ Ենոքավանում:

ԲՈԼՇԵՎԻԿ ԴԱՎԹՅԱՆԻ ԱՃՅՈՒՆԸ՝ ՍԱՐԻԳՅՈՒՂՈՒՄ

Հունիսի 28-ին Տավուշի մարզի Իջեւան համայքի սահմանամերձ Սարիգյուղ բնակավայրում հողին հանձնեցին Հայրենական մեծ պատերազմի մասնակից Բոլշեւիկ Դավթյանի աճյունը: Նրա գերեզմանը հայտնաբերվել է 2020 թ.-ին Ժիտոմիրի շրջանում՝ Ուկրաինայում անհայտ կորածների հարցերով զբաղվող կազմակերպության կողմից: Համավարակով եւ այլ խնդիրներով պայմանավորված՝ աճյունի տեղափոխումը հետաձգվել է: Իջեւանի համայնքապետանը հայտնում է, որ Ուկրաինայում Հայաստանի դեսպանության եւ Ուկրաինայի հայերի միության ջանքերով Բոլշեւիկ Դավթյանի աճյունն ամփոփվեց Սարիգյուղ բնակավայրում: Աճյունն ամփոփվեց հայրենի հողում: Բոլշեւիկ Դավթյանը ծնվել է 1920 թ.-ին,1941 թ.-ին պատերազմ էր մեկնել եղբոր հետ: Վերջինս նույնպես համարվում է անհայտ կորած: ՀՄՊ-ում անհայտ կորածների հայտնաբերման եւ աճյունների տեղափոխման աշխատանքներին աջակցելու համար Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը շնորհակալագիր հանձնեց Ուկրաինայի հայերի միության փոխնախագահ Դավիթ Մկրտչյանին: Համայնքապետի կողմից շնորհակալագրեր փոխանցվեցին նաեւ Ուկրաինայում ՀՀ դեսպանին եւ նրա խորհրդականին, Ուկրաինայի հայերի միության փոխնախագահներին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՀՈՍՔԸ ԴԵՊԻ ՋԵՐՄՈՒԿ ՄԵԾԱՑԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթը խոսել է Ջերմուկի համայնքապետ Վահագն Արսենյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչպիսի իրավիճակ է առողջարանային քաղաքում սեպտեմբերի 13-ի ռազմական գործողություններից հետո:

-Պարոն Արսենյան, կներկայացնե՞ք՝ ինչ իրավիճակ է այս պահին Ջերմուկում. տուրիստները ցանկանում են գալ Ջերմուկ հանգստի, սակայն տեղեկություններ են տարածվել, որ պատերազմական իրավիճակ է, եւ այնտեղ գտնվելը վտանգավոր է:

-Կարող եմ ասել՝ Ջերմուկում այս պահին իրավիճակը դեպի լավն է գնում: Անցած տարվա համեմատ՝ 25-30% տուրիստների աճ է նկատվել: Պատերազմից հետո 70-80% տոկոսով նվազել էր տուրիստների հոսքը, վախ կար Ջերմուկ այցելելու, բայց վերջին երկու-երեք ամսում փոխվել է իրավիճակը: Մարդիկ պետք է գան, տեսնեն իրենց աչքով, օրինակ՝ Վրաստան գնալու փոխարեն, ամառային արձակուրդները Ջերմուկում անցկացնեն:

-Իսկ հա՛յ այցելուներն են շատ, թե՞ տուրիստները:

-Այցելուները հիմնականում ռուսներ են եւ արտասահմանցիներ:

-Հայերի շրջանում դեռ կա՞ այդ վախը:

-Այո, բայց ասեմ, որ սեպտեմբերի 13-ից հետո մի կրակոց Ջերմուկում չի եղել:

-Սեպտեմբերի 13-ից հետո վերականգնե՞լ եք Ջերմուկը, օրինակ՝ ճոպանուղին վնասվել էր. ի՞նչ աշխատանքներ են տարվում:

-Ճոպանուղին վերականգնելու համար կառավարությունը գումար էր հատկացրել, մենք վերականգնել ենք ամբողջովին, իսկ հիմա պատվիրել ենք ճոպանուղու «տռոսը», որը նույնպես վնասված էր: Դա վերանորոգելուց հետո արդեն կբացվի ճոպանուղին: Մեծ շինարարություններ ենք անում, Եղնիկի ճանապարհն ենք ասֆալտապատում, լուսավորում:

-Պարոն Արսենյան, սեպտեմբերի 13-ի գործողությունների ժամանակ մեծ վնաս էր կրել «Ջերմուկ աշխարհ» առողջարանը. ի՞նչ աշխատանքներ են տարվում այն վերանորոգելու ուղղությամբ:

-Գումար տրամադրել ենք, նաեւ ես իմ անձնական միջոցներով էլ եմ օգնել:

-Կարելի՞ է եզրակացնել, որ այս իրավիճակը գոհացնող է:

-Իհարկե, առողջարաններում իրավիճակը գոհացնող է, բայց փոքր հյուրանոցներում մի փոքր պասիվություն կա, ինչը երեւի կուղղվի՝ հուլիսից սկսած: Նաեւ ասեմ, որ հուլիսի 30-ին Ջերմուկում կանցկացվի Ծիրանի փառատոն, իսկ օգոստոսի վերջին շաբաթում լինելու է Ջերմուկ քաղաքի տոնը, նախատեսում ենք 2-3 հազար մարդ հավաքել քաղաքում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՉԱՐՉՅԱՆԻ ՈՒ ԿՆՈՋ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Չարչյանը պաշտոնը զբաղեցրել է 2021 թվականի օգոստոսի 2-ին: Ըստ հայտարարատու տարում ներկայացված հայտարարագրի՝ Չարչյանը հայտարարագրել է միանձնյա 11 անշարժ գույք, որից 3՝ բնակարան, 4՝ ավտոկայանատեղի եւ ավտոտնակ, 3՝ հողամաս, եւ մեկ՝ հողին ամրակցված շինություն: Պատգամավորը հայտարարագրել է նաեւ բնակարան, որը փաստացի պատկանում է այլ անձի, սակայն շահագործվում է Չարչյանի կողմից:

«Իզմիրյան» բժշկական կենտրոնի գործադիր տնօրենը հայտարարագրել է երկու մեքենա, որից մեկը՝ RANGE ROVER մակնիշի, 2011 թվականի արտադրության, մյուսը՝ VOLVO մակնիշի, 2008 թվականի արտադրության, որը ձեռք է բերվել 2020 թվականի դեկտեմբերի 29-ին:

Չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող 5 գույք է հայտարարագրել Չարչյանը՝ 49 հազար դոլար եւ 8 մլն 500 հազար դրամ արժողությամբ:

Պատգամավորի բանկային հաշիվների մնացորդներ կազմել է 15 մլն 217 հազար դրամ եւ 9759 դոլար, իսկ նրա կանխիկ դրամական միջոցները կազմել է 31 մլն դրամ, 48 հազար եվրո եւ 60 հազար դոլար: Նրա հաշվետու տարվա եկամուտները կազմել են 31 մլն 542 հազար դրամ, որից 6 մլն 307 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Ազգային Ժողովից, 19 մլն 169 հազար դրամը՝ «Իզմիրլյան» բժշկական կենտրոնից, 6 մլն 065 հազար դրամը՝ Երեւանի պետական բժշկական համալսարանից:

Նշենք նաեւ, որ պատգամավորը ոչ մի ծախս չի հայտարարագրել: Նրա կինը՝ Մելանյա Հովհաննիսյանը, հայտարարագրել է 8 անշարժ գույք, որից 4՝ բնակարան Երեւանում, 2 հողամաս եւ 2 հողին ամրակայված այլ անշարժ գույք: Կինը տարեսկզբին հայտարարագրել է մեկ մեքենա՝ 2016 թվականի արտադրության BMW մակնիշի, սակայն տարվա ընթացքում ձեռք է բերել մեկ TESLA մակնիշի մեքենա՝ 9 մլն 500 հազար դրամով, եւ օտարել է BMW մակնիշի մեքենան 24 մլն դրամով: Հովհաննիսյանը հայտարարագրել է երկու թանկարժեք գույք՝ կահույք՝ 10 մլն 800 հազար ընդհանուր արժեքով: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 118 հազար դոլար եւ 116 հազար դրամ, իսկ կանխիկ դրամական միջոցները կազմել են 35 հազար դոլար: Նշենք, որ Չարչյանի կինը ոչ մի եկամուտ չի հայտարարագրել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 16-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԹՈՇԱԿՆԵՐԸ ԿՓՈԽՎԵՆ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կենսաթոշակային ապահովության եւ այլ դրամական վճարների վարչության պետ Անահիտ Գալստյանն ասուլիսի ժամանակ ներկայացրեց զինվորական կենսաթոշակների պարագայում սպասվող փոփոխությունները:

Նրա խոսքով՝ այս պարագայում չի փոփոխվում հիմնական կենսաթոշակը:

«Հիշեցնեմ, որ մենք հիմնական կենսաթոշակը սեպտեմբերին 18 հազար դրամից բարձրացրել ենք արդեն 20 հազար դրամի: Այս փոփոխությամբ կավելանա զինվորական ծառայության մեկ տարվա արժեքը: Այսօր մեկ տարվա արժեքը 1600 դրամ է, հուլիսի 1-ից արժեքը կլինի 1750 դրամ, այսինքն՝ 150 դրամով կբարձրանա: Շա՞տ է, թե՞ քիչ? եթե հաշվի առնենք, որ զինվորական կենսաթոշակի իրավունք տվող ստաժը նվազագույնը 20 տարի է, ստացվում է, որ 20 տարվա զինվորական ստաժով զինվորական կենսաթոշակները կավելանան նվազագույնը 3000 դրամով:

Հաջորդիվ նա մանրամասնեց պարտադիր զինվորական ծառայության հաշմանդամության կենսաթոշակների չափերը, որոնք սահմանում է Կառավարությունը:

«Պարտադիր զինվորական ծառայողները չունեն պայմանագրային զինծառայության ստաժ: Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողների հաշմանդամության խումբը ավելանում է. առաջին խումբը կամ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակման դեպքում կենսաթոշակը 46 հազար դրամից կդառնա 50 ազար 600 դրամ, ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակման դեպքում 36 հազար դրամը կդառնա 41 հազար 400 դրամ, այսինքն՝ կավելանա 5400 դրամով, ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակման դեպքում կենսաթոշակի չափը 33 հազարից կդառնա 38 հազար դրամ»,- ասաց նա:

ԱՀԱՋԱՆԳ՝ ԹԱՏՐՈՆԻՑ

Հունիսի 29-ի երեկոյան Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ էր ստացվել, որ Երեւանի Սայաթ-Նովայի պողոտայի Հ. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի շենքի տանիքի երկաթյա թիթեղը թուլացել եւ կախվել է, առկա է ընկնելու վտանգ:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Տիկնիկային թատրոնի հետ՝ ճշտելու դեպքի մանրամասները:

Թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռուբեն Բաբայանը մեզ հետ զրույցում բացատրեց. «Ձեւակերպման մեջ սխալ կա: Տանիքը կապ չունի թատրոնի հետ: Մենք ընդամենը գտնվում ենք բարձրահարկ շենքի առաջին եւ երկրորդ հարկերում: Մեզնից վերեւ էլի հարկեր կան»:

Նշենք, որ ահազանգից հետո դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական խումբը:

Փրկարարներն ապամոնտաժել են շենքի տանիքի փայտե կառուցատարերը եւ թիթեղները (մոտ 10 քմ):

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» 4

ԱՐՇԱՎ՝ ՆՈՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Ամերիաբանկ»-ը մեկնարկել է «Դարձի՛ր հաճախորդ օնլայն» արշավը բոլոր այն անձանց համար, որոնք առաջին անգամ կդառնան «Ամերիաբանկ»-ի հաճախորդ՝ բացելով օնլայն հաշիվ: Արշավի նպատակն է խրախուսել մարդկանց բանկային ծառայություններից օգտվել օնլայն եղանակով՝ խնայելով ժամանակ եւ ֆինանսական միջոցներ:

Մինչեւ հուլիսի 21-ը ներառյալ, արշավի շրջանակում բացելով օնլայն հաշիվ Հայաստանի ցանկացած կետից, հնարավոր է րոպեների ընթացքում դառնալ «Ամերիաբանկ»-ի հաճախորդ եւ, որպես «բարի գալուստ», ստանալ 1,500,000 դրամ արժողությամբ տուրիստական փաթեթի, կահույքի եւ տեխնիկայի 10 նվեր քարտերի գովազդային վիճակահանությանը մասնակցելու հնարավորություն:

«Ամերիաբանկ»-ն իր հաճախորդներին առաջարկում է լիարժեք թվային փորձառություն. նրանք կարող են առանց բանկ գալու բացել բանկային հաշիվ, ստանալ միջազգային վճարային քարտ եւ հասանելիություն MyAmeria հավելվածին միանգամայն անվճար:

«Այս արշավը մարդկանց մոտ օնլայն վարքագիծ ձեւավորելուն ուղղվող հերթական քայլն է: Նման արշավների արդյունքում է նաեւ, որ տարեցտարի հաճախորդները գնալով ավելի են նախընտրում հաշվի բացման օնլայն տարբերակը: Վերջին 4 տարիների ընթացքում օնլայն բացված հաշիվների թիվն աճել է ավելի քան 7 անգամ: Հավելեմ, որ օնլայն գործընթացի ընդհանուր տեւողությունը չի գերազանցում 10 րոպեն»,- ասում է «Ամերիաբանկ»-ի թվային բանկինգի ծառայության պրոդուկտի ղեկավար Անի Աբրահամյանը:

Արշավի շրջանակում անցկացվող խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- բացել հաշիվ օնլայն՝ դառնալով «Ամերիաբանկ»-ի հաճախորդ,
- ակտիվացնել «Ամերիաբանկ»-ի քարտը
- մուտք գործել MyAmeria հավելված:

Վիճակախաղին կարող են մասնակցել նաեւ «Ամերիաբանկ»-ի գործող ապառիկ ֆինանսավորում ունեցող ոչ հաշվետեր հաճախորդները, որոնք հաշվի բացումը, քարտի պատվիրումն ու MyAmeria հավելվածի ակտիվացումը, բացի օնլայն տարբերակից, կարող են կատարել նաեւ «Ամերիաբանկ»-ի ցանկացած մասնաճյուղում:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ»-ը ֆինանսական եւ տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: Ընթանալով թվայնացման ճանապարհով՝ բանկը ներդրել է մի շարք նորարար ծրագրեր ու հարթակներ եւ շարունակում է կատարելագործել դրանք՝ ձեւավորելով մարդու տարատեսակ կարիքների բավարարմանն ուղղված, դինամիկ զարգացող ֆինանսատեխնոլոգիական միջավայր:

«Ամերիա»-ն առաջինը Հայաստանում ստեղծել է էկոհամակարգեր ՓՄՁ-ների եւ անհատների համար՝ ապահովելով հասանելիություն բանկային եւ ոչ բանկային մի շարք ծառայությունների մեկ պատուհանի սկզբունքով՝ Estate.ameriabank.am, Automarket.ameriabank.am, Business.ameriabank.am:

Լինելով հաճախորդամետ՝ «Ամերիա»-ն ձգտում է ժամանակակից թվային աշխարհում ապահովել սպասարկման բարձր որակ՝ վստահելի եւ անվտանգ միջավայրում առաջարկելով կյանքի որակը բարելավելու ամբողջական լուծումներ:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ԱՌՕՐՅԱ

ԲՈՂՈՔԻ ԱԼԻՔՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ՏՂԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ախուրյան համայնքում բողոքի ալիք է հասունանում համայնքի ղեկավար Արծրուն Իգիթյանի դեմ: Բողոքի հիմքում համայնքի հակակարկտային կայանների (գազագեներատորային կայանների) սպասարկումն է, որը, ըստ շրջանառվող լուրերի, իրականացնում է Արծրուն Իգիթյանի որդին: Վերջինիս ոչ պատշաճ սպասարկման արդյունքում չեն փոխվել գազաբալոնները, եւ վերջին ժամանակահատվածում պարբերաբար տեղացող անձրեւների եւ կարկուտների ժամանակ դրանք չեն գործել, ինչի հետեւանքով Ախուրյան, Ազատան, Այգաբաց, Գետք, Երազգավորս գյուղերում վնասվել է բերքի մոտ 40-60 տոկոսը:

Կարկուտից տուժած գյուղացիները պատրաստվում են բողոքի դուրս գալ գործող համայնքի ղեկավար Արծրուն Իգիթյանի դեմ, ներկայացնել իրենց վնասներն ու պահանջները:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲՈՂՈՔՆԵՐ՝ Wildberries–ԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթը բազմաթիվ ահազանգեր է ստանում քաղաքացիներից ռուսական Wildberries ընկերության վերաբերյալ: Մեզ ահազանգած քաղաքացիները դժգոհում են, որ ընկերությունն անհասկանալի պատճառներով Հայաստանի քաղաքացիների համար փակել է կոսմետիկայի խանութների, հագուստի բրենդների արտիկուլները, ու վերջիններս չեն կարողանում իրենց ցանկալի գնումները կատարել:

Ավելին՝ քաղաքացիները նաեւ դժգոհեցին, որ Wildberries օնլայն առեւտրային ցանցից հնարավոր է ավելի մատչելի գնումներ կատարել՝ փոխելով Հայաստանի առաքման հասցեն Ռուսաստանի առաքման հասցեով, որի մասին, սակայն, քաղաքացիներից ոչ բոլորն են տեղեկացված, ոչ բոլոր համակարգերին են հասանելի, եւ ոչ բոլորն են կարողանում օգտվել:

Նշենք, որ քաղաքացիների ահազանգերի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել ռուսական Wildberries ընկերությանը պարզաբանում ստանալու համար:

Հիշեցնենք, որ ավելի վաղ գրել էինք, որ ընկերությունը պարբերաբար թանկացնում է գնված ապրանքի վերադարձի գումարը: Այժմ նախկին 450-դրամը դարձել է 850 դրամ: Քաղաքացիներին զայրացրել է նաեւ այն հանգամանքը, որ երեխաների համար նախատեսված կաշաները, նպարեղենը չեն կարողանում հատով գնել, քանի որ Wildberries-ը փոխել է գնման ձեւը. այն այսուհետ պետք է գնել որոշակի քանակով, ինչը մեծ անհարմարություններ է պատճառել եւ վրդովմունք առաջացրել քաղաքացիների շրջանում:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ՀԱՄԵՐԳ-ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի «Առնո Բաբաջանյան» համերգասրահում իրականացրել է հաշվետու համերգ-ցուցահանդես: Միջոցառման մասնակիցներն էին ՀՀ մարզերի երաժշտական, գեղարվեստի, արվեստի դպրոցների շնորհալի սաները:

«Առնո Բաբաջանյան» համերգասրահի նախասրահում բացվել է սաների նկարչական եւ դեկորատիվ-կիրառական աշխատանքների ցուցահանդեսը, այնուհետեւ շնորհալի երաժիշտ-կատարողները հանդես են եկել համերգային ծրագրով:

Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի ղեկավար Նելլի Սարգսյանը շնորհավորել է դպրոցների սաներին տարեվերջյան ցուցահանդեսի եւ համերգային ծրագրի ներկայացման կապակցությամբ եւ նշել է, որ եթե անգամ երեխաները հետագայում երաժշտարվեստի, նկարչական, դեկորատիվ-կիրառական արվեստի ճյուղերը չընտրեն որպես մասնագիտություն, գեղարվեստական կրթության շնորհիվ նրանք մեծանում են արժանապատիվ եւ կիրթ քաղաքացիներ:

Տարեվերջյան հաշվետու ցուցահանդեսին եւ համերգին մասնակցել են 10 մարզի 22 երաժշտական դպրոցների եւ 12 գեղարվեստի, արվեստի դպրոցների սաներ: Ընդհանուր առմամբ, համերգին մասնակցել են շուրջ 160 աշակերտներ: Ներկայացված են երաժշտարվեստի բոլոր բաժինները՝ լարային, փողային, հարվածային, դաշնամուրային, վոկալ, երգչախմբային, կամերային, ինչպես նաեւ բոլոր գործիքները՝ ֆագոտ, շեփոր, կլարնետ, քանոն, սանթուր եւ այլն: Ցուցահանդեսին ներկայացվել է ավելի քան 80 ստեղծագործական աշխատանք՝ նկարչական, դեկորատիվ-կիրառական, գոբելեն, ասեղնագործություն, քանդակ:

«Կարեւոր է մանկավարժների դերը, որոնք տարվա ընթացքում կատարել են անգնահատելի աշխատանք: Շատ կարեւոր է Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի մեթոդիստների մասնակցությունն այս գործընթացին: Մանկավարժ-մեթոդիստները մանկավարժներին հետեւողական մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու միջոցով օգնում են զարգացնելու երեխաների շնորհները իրենց ընտրած երաժշտական եւ արվեստի ճյուղերում: 2023 թվականի 1-ին կիսամյակում հիմնադրամի «Երաժշտական եւ արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներ» ծրագրի շրջանակում մեթոդիստ-մանկավարժները, ինչպես նաեւ ՀՀ բարձրագույն, միջին մասնագիտական եւ արտադպրոցական ուսումնական հաստատությունների առաջատար հրավիրյալ մասնագետները ՀՀ մարզերի եւ Երեւան քաղաքի երաժշտական, արվեստի, գեղարվեստի եւ պարարվեստի դպրոցներում իրականացրել են ուսումնամեթոդական եւ գործնական օգնություն՝ 600 դասատուների եւ 2530 աշակերտների համար»,- նշել է Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի ղեկավար Նելլի Սարգսյանը:

Նշենք, որ միջոցառումը միտված է գեղարվեստական կրթության եւ գեղագիտական դաստիարակության բնագավառի հանրահռչակմանը, ՀՀ մարզերում մշակութային կյանքի աշխուժացմանը, երեխաների եւ պատանիների ստեղծագործական ներուժի բացահայտմանը, մայրաքաղաք-մարզեր կապի ամրապնդմանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԱԴՈՆՆԱՆ ԳԱՄՎԵԼ Է ԱՆԿՈՂՆՈՒՆ

64-ամյա ամերիկացի երգչուհի Մադոննան, որը բակտերիալ վարակի պատճառով բուժվելուց հետո դուրս է գրվել հիվանդանոցից, իրեն դեռ վատ է զգում եւ վեր չի կենում անկողնուց. այս մասին գրում է TMZ-ը՝ հղում անելով աղբյուրներին:

Հրատարակության զրուցակիցների խոսքով՝ Մադոննան դեռ պառկած է անկողնում Նյու Յորքի իր բնակարանում, իսկ նրա շրջապատում կարծում են, որ երգչուհին «համաշխարհային շրջագայություն սկսելու համար բավարար մարզավիճակում չէ»:

TMZ-ի աղբյուրները նաեւ նշել են, որ երգչուհին տառապում է սրտխառնոցի նոպաներից, վարակը դեռեւս հարվածում է նրա առողջությանը:

Հիշեցնենք, որ հունիսի 28-ին Մադոնայի մենեջեր Գայ Օզրին հայտնել էր, որ հունիսի 24-ին նրա մոտ բակտերիալ վարակ է սկսվել: Երգչուհին մի քանի օր անցկացրել է հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունքում: Երգչուհին մոտ մեկ ամիս ջերմություն է ունեցել, սակայն չի համաձայնել հոսպիտալացմանը, քանի որ չի ցանկացել շրջագայությունը հետաձգել ավելի ուշ ժամկետի:

Page Six-ի հավաստմամբ՝ նա մի քանի շաբաթ «ծանր փորձեր է արել» առաջիկա համերգային շրջագայության համար, մինչ նրան գտել են անգիտակից վիճակում եւ հոսպիտալացրել: Հրատարակության տվյալներով՝ Մադոնանա աշխատել է օրական 12 ժամ:

Մադոննայի Celebration համաշխարհային շրջագայությունը, որով նշվելու էր նրա առաջին ալբոմի թողարկման 40-ամյակը, պետք է մեկնարկեր հուլիսի 15-ին Վանկուվերում կայանալիք համերգով: Երգչուհին համերգներ էր նախատեսել 43 քաղաքում: Շրջագայությունը պետք է ավարտվեր 2024 թվականի սկզբին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՄԵՍԻԻ ՀԵՏ

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» նախագահ Ժոան Լապորտան խոստացել է, որ ակումբը հրաժեշտի հանդիպում կկազմակերպի թիմի նախկին խաղացող, աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի հարձակվող Լիոնել Մեսիի համար:

«Մեսին ցանկանում էր վերադառնալ «Բարսելոնա»: Նա շատ ծանր փուլ էր ունեցել Փարիզում, եւ նրա հայրն ասաց, որ Լեոն չի ցանկանում դարձյալ նման ճնշման տակ ընկնել: Մենք հարգում ենք Մեսիի որոշումը: «Բարսելոնան» միշտ կլինի նրա տունը:

Ցավում եմ, որ ամեն ինչ այսպես դասավորվեց, բայց ակումբի նախագահի համար առաջին տեղում «Բարսելոնան» է:

Ես քննարկել եմ Մեսիի հետ միջոցառումը, որի ժամանակ հնարավոր կլինի հարգանքի տուրք մատուցել նրան: Վերակառուցումից հետո «Կամպ Նոու» ստադիոնի բացումը հրաշալի առիթ կլինի»,- Լապորտայի խոսքը մեջբերում է Mundo Deportivo-ն:

Մեսին կարիերան կշարունակի ամերիկյան «Ինտեր Մայամիում»:

ԴԺԳՈՀ՝ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻՑ

Մադրիդի «Ռեալի» իտալացի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին դժգոհ է Արքայական ակումբի տրանսֆերային քաղաքականությունից. հաղորդում է The Athletic-ը:

Ֆրանսիացի հարձակվող Քարիմ Բենզեմայի հեռանալուց հետո Անչելոտին ակումբի ղեկավարությանը խնդրել էր ձեռք բերել կենտրոնական հարձակվողի՝ մատնանշելով Լոնդոնի «Տոտենհեմի» եւ Անգլիայի հավաքականի խաղացող Հարի Քեյնին:

«Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսը հարձակման գծի համար դիտարկում է միայն Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի եւ Ֆրանսիայի հավաքականի առաջատար Կիլիան Մբապեին, սակայն քիչ հավանական է, որ այդ տեղափոխությունը տեղի կունենա այս ամռանը:

Իսպանիայի ավարտված առաջնությունում «Ռեալը» գրավել է երկրորդ տեղը՝ առաջ թողնելով «Բարսելոնային», Չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչում պարտվել է անգլիական «Մանչեսթեր Սիթիին»:

● *Հուլիսի 2-ին Երեւանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Գնա՛ մեռի, արի՛ սիրեմ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞r օբյեկտները ենթակա չեն լիցենզավորման:

Պետրոս Կարապետյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանվել եւ լիցենզավորման ենթակա տեսակների ցանկից հանվել են մի շարք օբյեկտների նկատմամբ լիցենզավորված կազմակերպությունների կողմից շինարարությունն իրականացնելու պահանջը, որոնց նկատմամբ կիրառվում է հսկողություն՝ համարելով դրանք չլիցենզավորված գործունեություն:

Այդ օբյեկտներն են բնակավայրերում կառուցվող, 300 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող, մինչեւ երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տները, հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտները, 150 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող օժանդակ շինությունները եւ 50 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ավտոտնակները, 1000 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ջերմոցները, 500 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունները եւ 100 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունները:

Քաղաքաշինության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վերոնշյալ օբյեկտների շինարարական աշխատանքները պետք է կատարվեն տնտեսական եղանակով՝ առանց լիցենզավորված կապալառուի եւ շինարարության որակի տեխնիկական հսկիչի ներգրավման:

ԷՋԸ՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

ՀԱՐՑ. Ո՞վ է զբաղվում պոլիէթիլենային տոպրակների արգելքի վերահսկմամբ:

Տիգրան Ավետիսյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 2022 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ առեւտրի իրականացման վայրերում եւ առեւտրի օբյեկտներում մինչեւ 50 միկրոն խտությամբ պոլիէթիլենային պարկերի եւ տոպրակների վաճառքի եւ իրացման արգելքի դրույթի նկատմամբ Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը չի իրականացնում վերահսկողական գործառույթներ:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմին

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն՝ արգելվող ապրանքներ վաճառելու (իրացնելու) նկատմամբ վերահսկողությունը վերապահված է տեղական ինքնակառավարման մարմիններին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանի Աջափնյակ վարչական շրջանում կոտրել են համայնքային գույք հանդիսացող աղբամանները եւ թափոններով շրջապատել տարածքը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+7 + 11 +20 + 24
Կոտայքի լեռներ	+7 +10 +20 + 23
Կոտայքի նախալեռներ	+15 + 18 +28 + 30
Գեղարքունիք	+8 + 11 +19 + 24
Լոռի	+ 9 + 12 +20 + 24
Տավուշ	+12+ 16 +23 + 27
Արագածոտնի լեռներ	+ 6 + 10 +20 + 22
Արագածոտնի նախալեռներ	+14 + 16 + 27 + 31

Արարատ	+18 + 22 +32 + 34
Արմավիր	+17+ 19 +32 + 34
Վայոց ձորի լեռներ	+ 8+10 +20 + 23
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 21 +32 + 34
Սյունիքի հովիտներ	+16 + 21 +32 + 36
Սյունիքի նախալեռներ	+12+ 14 +24 + 26
ԼՂՀ	+16 + 20 +30 + 35
Երեւան	+17 + 19 +30 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*